



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

№ 44-Ա/2,

24 հունվարի 2018թ.

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՀՄ. 647 - Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի
Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական
ծրագրերը հաստատելու մասին» հմ. 647-Ա/Ք հրամանի՝

1) **Հավելված 1-ի** «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական
կրթության (բակալավր ու անընդհատ և ինտեգրացված) մասնագիտությունների կրթական
ծրագրերի» ցանկում՝

ա. <<0428-Միջոլորտային մասնագիտություններ>> բաժնի <<042801.00.6-Դատական
փորձաքննություն>> մասնագիտության 3-րդ սյունակը լրացնել <<042801.01.6-Դատական
փորձաքննություն>> տողով.

բ. «0718-Միջոլորտային մասնագիտություններ» բաժնի «071803-Մեխատրոնիկա»
մասնագիտության 3-րդ սյունակը լրացնել «071803.01.6-Մեխատրոնիկա» տողով.

գ. <<1015-Զբոսաշրջություն>> բաժնի <<101501.00.6-Զբոսաշրջություն>> մասնագիտության
3-րդ սյունակը լրացնել <<101501.02.6 Ագրոգբոսաշրջություն>> տողով.

դ. <<0231-Բանասիրություն>> բաժնի <<023102.00.6-Օտար լեզու և գրականություն>>
մասնագիտության 3-րդ սյունակը լրացնել <<023102.09.6-Անգլերեն լեզու, ֆրանսերեն լեզու և
հաղորդակցություն>>, <<023102.10.6-Անգլերեն լեզու, գերմաներեն լեզու և
հաղորդակցություն>>, <<023102.11.6-Անգլերեն լեզու, իսպաներեն լեզու և հաղորդակցություն>>,
<<023102.12.6-Անգլերեն լեզու, իտալերեն լեզու և հաղորդակցություն>>տողերով.

գ. <<0232-Լեզվաբանություն>> բաժնի <<023201.00.6-Լեզվաբանություն>> մասնագիտության 3-րդ սյունակը լրացնել << 023201.09.6-Միջմշակութային հաղորդակցություն և թարգմանություն (ըստ լեզուների)>> տողով:


2) Հավելված 2-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոս) մասնագիտությունների կրթական ծրագրերի» ցանկում՝

ա. <<0428-Միջոլորտային մասնագիտություններ>> բաժնի <<042801.00.7-Դատական փորձաքննություն>> մասնագիտության 3-րդ սյունակը լրացնել <<042801.01.7-Դատական փորձաքննություն>> տողով.

բ. <<0718-Միջոլորտային մասնագիտություններ>> բաժնի «071803.00.7-Մեխատրոնիկա» մասնագիտության 3-րդ սյունակը լրացնել «071803.01.7-Մեխատրոնիկա» տողով.

գ.<<1015-Զբոսաշրջություն>> բաժնի <<101501.00.7-Զբոսաշրջություն>> մասնագիտության 3-րդ սյունակը լրացնել <<101501.05.7- Ագրոզբոսաշրջություն>> տողով.

դ. <<0232-Լեզվաբանություն>> բաժնի <<023201.00.7-Լեզվաբանություն>> մասնագիտության 3-րդ սյունակը լրացնել <<023201.11.7-Ընդհանուր և հայ լեզվաբանություն>> տողով:



?????? ???? ???? ???? ???? ???? ?

Jan 24 2018 10:56 AM

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՅԱՆ